

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 42/6**

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 11.06.2018թ. N4102214 ակտի դեմ «Վ.Կ. Ավտոյուքս» ՍՊԸ-ի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

«Վ.Կ. Ավտոյուքս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) տնօրենը հայտնում է, որ ընկերությանը պատկանող ք.Երևան, Նար-Դոսի 74/1, 74/2 հասցեում գտնվող մանրածախ առևտրի կետից ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 2 բաժնի աշխատակիցների կողմից 18/05/2018թ. կատարվել է գնում: Ծրագրային խնդրի պատճառով, ինչը և փաստում են հարկային տեսուչներն իրենց կողմից կազմված թիվ 4102214 ակտում, հնարավոր չի եղել տրամադրել ՀԴՄ կտրոն, մեջբերում ակտից. «Տնօրեն Վահան Հարությունյանը փորձեց գումարը մուտքագրել ՀԴՄ, սակայն չստացվեց և ՀԴՄ կտրոն չտրամադրվեց, քանի որ խափանված էր տնտեսվարողի ներքին ցանցը»:

Ակնհայտ է, որ չկա որևէ կանխամտածված քայլ օրենքը խախտելու, քանի որ ընկերության աշխատակիցը ցանկացել է տրամադրել ՀԴՄ կտրոն, սակայն նրան այդ պահին դա անել չի հաջողվել: Ինչպես նաև ընկերությունը, համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 11-ի N406-Ն որոշման, ՀԴՄ կտրոնում պարտադիր պետք է արտացոլի հաստատված արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ ԱՏԳ ԱԱ) 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքը և այդ դիրքում ներառված փաստացի վաճառված ապրանքի անվանումը, և հետևաբար չեն կարող ուղղակի ՀԴՄ կտրոն տրամադրել առանց վերը նշված վավերապայմանների: Բացի այդ, ընկերությունն առաջնորդվել է ՀՀ կառավարության 05/10/2017թ. թիվ 1318-Ն որոշման հավելված N3-ով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների 15-րդ կետով, և խնդիրը վերացնելու համար կապ են հաստատել համապատասխան մասնագետի հետ, ում օգնությամբ փորձել են դուրս բերել ՀԴՄ կտրոն՝ չխախտելով ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 11-ի N1406-Ն որոշման պահանջները, սակայն ֆիզիկապես չեն հասցրել իրականացնել այդ գործողությունը, քանի որ հսկիչ գնումն իրականացնելուց մոտ 5 րոպե հետո ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 2 բաժնի աշխատակիցները հետ վերադառնալով, ներկայացրել են իրենց ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման, որից հետո ՀԴՄ-ն անջատվել է ներքին ցանցից և դուրս է բերվել «Z» հաշվետվություն, որտեղ արտացոլված չի եղել իրենց կողմից կատարված վճարման արժեքը: Այդ մասին են փաստում նաև դուրս բերված «Z» հաշվետվության մեջ արտացոլված թվերը, ըստ որի, այդ նույն ժամանակահատվածում

կազմակերպության ՀԴՄ մուտքագրվել են 54.000 դրամ և 24.000 դրամ գումարներ, որոնք մուտքագրվել են համապատասխան մասնագետի հետ կապ հաստատելուց հետո միայն, որից հետո վերը նշված 40.000 դրամ գումարը կրկին չի հաջողվել մուտքագրել ՀԴՄ: Երկրորդ անգամ մասնագետի հետ կապ հաստատելուց հետո ՀԴՄ է մուտքագրվել պայմանական 50 դրամի արժողությամբ կտրոն, որպեսզի կրկին ստուգվի ՀԴՄ-ի աշխատանքը, սակայն 40.000 դրամ գումարն ընկերության աշխատակիցը ֆիզիկապես չի հասցրել մուտքագրել ՀԴՄ, քանի որ այդ ընթացքում նրան են մոտեցել ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 2 բաժնի աշխատակիցները, ներկայացնելով իրենց ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը: Տնօրենը վստահ է, որ եթե դա տեղի ունենար 1-2 ռուպե ավելի ուշ, ապա ընկերության աշխատակիցը կհասցներ ՀԴՄ մուտքագրել նաև 40.000 դրամը: Այսինքն, իրենց կողմից չի եղել կանխամտածված օրենքի խախտում, որովհետև իրենք այդ ընթացքում փորձել են շտկել խնդիրը և ՀԴՄ մուտքագրել կատարված վճարման արժեքը:

Հարկ է նաև անդրադառնալ ՀԴՄ կիրառման ճշտության ստուգման առաջին դեպքին, որը տեղի է ունեցել 13.12.2017թ.: Այդ ժամանակ ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 2 բաժնի աշխատակիցների կողմից կատարվել է 1.000 դրամի կանխիկ վճարում, կազմակերպության կողմից մատուցված ծառայության /1 անվադողի հավասարակշռում/, և կրկին ՀԴՄ կտրոն չտրամադրելու պատճառը եղել է ՀԴՄ-ի ծրագրային խախտումը, որի պատճառով աշխատակիցը չի կարողացել ՀԴՄ մուտքագրել 1.000 դրամ ծառայության արժեքը: ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 2 բաժնի աշխատակիցները ևս չեն կարողացել ՀԴՄ-ից դուրս բերել «Z» հաշվետվություն: Այդ մասին նաև նշված է եղել 25.12.2017թ. թիվ 2140863 ակտում: Նշվում է նաև, որ այդ ժամանակ ընկերությունը տրամադրում էր ՀԴՄ պարզ կտրոն, և խախտման պատճառը պայմանավորված չէր կարող լինել ներքին ցանցի հետ: Այդ ժամանակ իրենք հեռախոսով կապ են հաստատել ՀԴՄ սպասարկումն իրականացնող «ՀԴՄ Շտրիխ» ՍՊԸ աշխատակցի հետ, պարզել են, որ սպասարկման վարձերի հետ կապված ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, և անհայտ պատճառով իրենց կազմակերպության ՀԴՄ-ն ունեցել է ծրագրային խնդիր սերվերի հետ: Այնուհետև, ՀԴՄ սպասարկումն իրականացնող ընկերության կողմից համապատասխան գրանցմամբ իրենց է տրամադրվել ժամանակավոր ՀԴՄ և իրենց ՀԴՄ-ն տարվել է սպասարկող կազմակերպության տարածք:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը՝ բողոքաբերը խնդրում է չեղյալ համարել 11.06.2018թ. թիվ 4102214 ստուգման ակտը :

## **2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 18.04.2018թ. թիվ 4102214 հանձնարարագրի համաձայն «Վ.Կ. Ավտոյուքս» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 11.06.2018թ. N4102214 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 2 բաժնի գլխավոր հարկային տեսուչ Արամայիս Անանյանի և հարկային տեսուչ Արսեն Ավդայանի կողմից 18.05.2018թ. ժամը 13:15-ին ք.Երևան, Նար-Դոսի 74/1, 74/2 հասցեում գործող «Վ.Կ. Ավտոյուքս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00455984) պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվեց գնում 40000 դրամ արժողությամբ

/2 հատ անվադող (195 x 55 x 15) 1 հատը 20000 դրամ արժողությամբ/, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Տնօրեն՝ Վահան Հարությունյանը, փորձեց գումարը մուտքագրել ՀԴՄ, սակայն չստացվեց և ՀԴՄ կտրոն չտրամադրվեց, քանի որ խափանված էր տնտեսվարողի ներքին ցանցը: Ժամը 13:20-ին ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:22-ին ՀԴՄ-ն անջատվեց ներքին ցանցից, դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 79100 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 40000 դրամը, ժամը 13:22-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 13:22-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 119100 դրամ ընդհանուր գումարով: Գնված ապրանքը հետ վերադարձվեց:

Ստուգմամբ պարզվեց, որ խախտվել են ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման հավելված N 3-ով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների 4-րդ և 9-րդ կետերի պահանջները, համաձայն նույն կարգի 24-րդ կետի գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի կամ քանակի չմուտքագրումը հսկիչ-դրամարկղային մեքենա դիտվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտում:

Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով առաջադրվել է տուգանք՝ գումարով 300000 դրամ:

### **3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման հավելված N3-ի 4-րդ կետի համաձայն՝ գանձապահը ՀԴՄ օգտագործող է, ով կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտի միջոցով իրականացված գործարքներին վերաբերող՝ սահմանված տեղեկությունները և հաշվարկի կատարման համար անհրաժեշտ տվյալները մուտքագրում է ՀԴՄ, տպում է ՀԴՄ կտրոնը և այն տրամադրում ապրանքներ ձեռք բերողին կամ աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին:

Հավելված N3-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների կամ մասնակի վճարումների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն:

Հավելված N3-ի 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում նաև գնված ապրանքի կամ ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության արժեքի (այդ թվում՝ կանխավճարի) չմուտքագրումը կամ դրանց արժեքից ցածր արժեքի (այդ թվում՝ կանխավճարից ցածր կանխավճարի) մուտքագրումը:

Իր հերթին, ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ կատարված խախտման մեջ, ըստ էության, բացակայում է ընկերության կառավարման մարմինների մեղքը: Այսպես, գլխավոր հարկային տեսուչ Արամայիս Անանյանի և հարկային տեսուչ Արսեն Ավդայանի կողմից 18.05.2018թ. ժամը 13:15-ին ք.Երևան, Նար-Դոսի 74/1, 74/2 հասցեում գործող «Վ.Կ. Ավտոյուքս» ՍՊԸ-ին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվել է 40000 դրամի գնում: Ընկերության տնօրենը փորձել է գումարը մուտքագրել ՀԴՄ, ինչն իրեն չի հաջողվել, քանի որ խափանված է եղել ներքին ցանցը: Ընդ որում, ընկերության տնօրենի գումարը մուտքագրելու փորձերը կատարվել են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց ներկայությամբ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք ևս մեկ անգամ հաստատեցին, որ ընկերության տնօրենը փորձել է կատարված գնման գումարը մուտքագրել ՀԴՄ, ինչը ցանցի խափանման պատճառով իրեն չի հաջողվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով նույնաբովանդակ դիմում-բողոքների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված նախադեպային որոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

«Վ.Կ. Ավտոյուքս» ՍՊԸ-ի դիմում-բողոքը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսուչի կողմից 11.06.2018թ. N4102214 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ**



**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**